12963

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան
« 12 » 09 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0168-23

Ձեռնարկողը՝ ***«Գրին Սոլուշնս» ՍՊԸ***
Գեղարքունիքի մարզ, Լճաշեն համայնք

Գործունեությունը՝ ***Լճաշեն, Վարսեր, Գեղամավան համայնքների փարածքներում 110/10կՎ լարման 2Х16ՄՎԱ հզորության ենթակայանի և 110կՎ լարման սնող օդային գծի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ / Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ եզրակացությունը 7 թերթ:

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0168-23

« 12 » սեպտեմբերի **2023թ.**

Գեղարքունիքի մարզի Լճաշեն, Վարսեր, Գեղամավան համայնքների տարածքներում 110/10կՎ լարման 2Х16ՄՎԱ հզորության ենթակայանի և 110կՎ լարման սնող օդային գծի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Գրին Սոլուշնս» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /Բ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Գեղամավան, վարսեր, Լճաշեն բնակավայրեր

Ներածական մաս. Նախատեսվում է կառուցել 110/10կՎ լարման 2x16ՄՎԱ հզորության ենթակայան և 110կՎ լարման սնող օդային գիծ: Նախատեսվող գործունեությունը գտնվում է Սևան համայնքի Գեղամավան, Վարսեր, Լճաշեն բնակավայրերի վարչական տարածքներում: Բնակավայրից գտնվում է մոտ 1,5կմ հեռավորության վրա:

Ենթակայանը նախատեսվում է տեղադրել Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի 7/1 հողամասում: Ենթակայանի տարածքը զբաղեցնելու է 2000 քառ.մ, որից 155,04 քառ. մ զբաղեցնելու է շենքը:

Օդային գծի ուղեգիծն անցնելու է Գեղամավան, Վարսեր, բնակավայրերին պատկանող տարածքով:

Հողի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արոտավայր, այլ հողատեսք:

Ենթակայանի տարածքի հողամասի նպատակային նշանակություն արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրության նշանակության է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արդյունաբերական օբյեկտների:

Նկարագրական մաս. Նախագծվող 110կՎ ՕԳ-ի ճյուղավորումն իրականացվում է գոյություն ունեցող 110կՎ «Ախթամար» ՕԳ-ի N58 Ս1Մ տիպի խարսխաանկյունային հենարանից: ՕԳ-ի ուղեգծի վերջը՝ նախագծվող 110/10կՎ ԵԿ-ի պորտալներն են: Նախագծվող ՕԳ-ի երկարությունը N58 Ս1Մ հենարանից մինչև ԵԿ-ի պորտալները կազմում է 4609.0մ: Հաղորդալարն ընդունված է պողպատալյումինե AC-120/19 տիպի: Անցկացվող օդային գծերը լինելու են միայն վերգետնյա:

ՕԳ-ի շանթապաշտպանությունը նախատեսված է C-50 տիպի ճոպանով: Ճոպան նախատեսված չէ միայն NN10-11 հենարանների թռիչքում:

Հաղորդալարերի մեկուսացումը նախատեսված է ПС70Е տիպի ապակե մեկուսիչներով:

Նախատեսվում է տեղադրել երկու հատ եռաֆազ երկփաթույթ ուժային տրանսֆորմատորներ 16000կՎԱ հզորության՝ 100/10կՎ լարման:

Շանթապաշտպանությունն իրականացվում է 110կՎ պորտալների վրա տեղադրված 5մ երկարության ձողերի միջոցով՝ 25մ բարձրությամբ շանթարգելով:

Ենթակայանի օպերատիվ հոսանքը հաստատուն է, իսկ սեփական կարիքների շղթաների սնուցման համար ըստ հաշվարկների, տեղադրվում է երկու հատ ТМ-63կՎԱ հզորության 10/0.4-0.23կՎ տրասֆորմատոր և տեղադրվում է 10կՎ պահարանի մեջ: Ուժային և հսկիչ մալուխների մոտեցումը սարքավորումներին 110կՎ ԲԲՍ-ում նախատեսվում է 600x600մմ և 800x900մմ անցուղիներով:

110/10կՎ ենթակայանի հողանցումն իրենից ներկայացնում է 40x4մմ կտրվածքի շերտապողպատից և 50x50x5մմ կտրվածքի անկյունային պողպատից բաղկացած ցանց: Շերտապողպատը տեղադրվում է 0.7մ խորության վրա: Ենթակայանում տեղադրվող բոլոր սարքավորումների մետաղական մասերն, ինչպես նաև կոնստրուկցիաները պետք է միացվեն ընդհանուր հողանցման եզրագծին:

Նախատեսվում է ՓԲՍ-ի բանվորական լուսավորություն և բոլոր մալուխներն անց են կացվելու պատերով՝ փակ սվաղի տակ:

Օդային գծի հորատանցքերի փորման վայրերում շինհրապարակ չի նախատեսվում, շինհրապարակը կազմակերպվելու է միայն ենթակայանի կառուցման վայրում՝ 40x35մ մակերեսով:

Տարածքում քանդման աշխատանքեր չեն նախատեսվում, կատարվելու է միայն հողային գրունտի հանում: Հողային աշխատանքները կատարվելու են ձեռքով և բուլդոզերով:

Հենասյունների տեղադրման, հոսանքալարերի անցկացման շինարարական աշխատանքների ժամանակ նախատեսված մեքենաները և տեխնիկան աշխատելու են հաջորդաբար՝ ըստ անհրաժեշտության: Անհրաժեշտ շինանյութերը գործունեության վայր են բերվելու ըստ տեսակների և անհրաժեշտության, տեղադրվելու են տակդիրների վրա:

Շին տեխնիկան և սարքավորումները կարող են լինել Կապալառու կազմակերպությանը կամ վարձակալվել այլ կազմակերպություններից:

Ենթակայանի տարածքը մասնակի ասֆալտապատվելու է՝ տարածքի մոտ 10%-ը: Տրանսֆորմատորները տեղադրվելու են բետոնային հիմքերի վրա: Ենթակայանի տարածքում շինության ներսում տեղադրվելու են միայն ցածր լարման սարքավորումներ, իսկ բարձր լարման ուժային սարքավորումները տեղադրվելու են բաց տարածքում՝ բետոնապատ հիմքերի վրա:

Ենթակայանի փակ շինությունը լինելու է մեկ հարկանի, տանիքային ծածկով, ապահովված է լինելու անձրևաջրերի հեռացման համակարգով:

ՕԳ-ի կառուցման համար նախատեսված են տիպարային մետաղական հենարաններ՝ ընդհանուր 27 հատ հենարան:

Հետագայում 110կՎ ՕԳ-ի պահուստային սնում ունենալու նպատակով, նախնագծվող ԵԿ-ում նախատեսված է երկրորդ 110կՎ մուտքի բջիջ: 110կՎ երկրորդ շղթայի մոնտաժման համար, վերջին հատվածում նախատեսված են երկշղթա հենարաններ:

Գոյություն ունեցող N58 Y1M ճյուղավորման հենարանից 1820մ հատվածում (ՊԿ 0+00 մինչև ՊԿ18+20) ուղեգծում նախատեսված է 11 հատ միաշղթա հենարանի տեղադրում:

Ուղեգծի 2789.0մ հատվածում (ՊԿ18+20-ից մինչև ԵԿ-ի մուտքի պորտալներ ՊԿ46+09) ուղեգծում նախատեսված է 16 հատ երկշղթա հենարանի տեղադրում:

Հենարանների տակ նախատեսված են տիպային երկաթբետոնե հիմքեր:

Հենարանների հողակցումը նախատեսված է ճառագայթային հողակցիչներով:

Շինության կառուցման շին-մոնտաժային և հատուկ աշխատանքների կատարման տևողությունը նախատեսված է 730օր:

Աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով, ըստ պահանջի: Ջրցանի և հողային գրունտի խոնավացման համար օգտագործվելու է տեխնիկական ջուր, որը տարածք է բերվելու ջրցան մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարության համար նախատեսված նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից:

Տարածքում շինանյութերի պահեստավորում չի նախատեսվում: Անհրաժեշտ շինանյութերը գործունեության վայր են բերվելու ըստ տեսակների և անհրաժեշտության, տեղադրվելու են տակդիրների վրա:

Հենարանների տեղադրման վայրերի կոորդինատները WGS համակարգում

Հ/h	Հենարանի համար	X կոորդինատ	Y կոորդինատ
1	N1	8490809.364	4491195.193
2	N2	8490806.005	4491165.831
3	N3	8490752.474	4490996.001
4	N4	8490802.572	4490865.281
5	N5	8490853.393	4490732.668
6	N6	8490808.152	4490502.420
7	N7	8490799.367	4490257.562
8	N8	8490790.637	4490012.747
9	N9	8490773.831	4489860.668
10	N10	8490792.264	4489709.389
11	N11	8490763.296	4489509.688
12	N12	8490779.097	4489383.660
13	N13	8490808.370	4489151.483
14	N14	8490861.590	4489037.285
15	N15	8490917.874	4488916.791
16	N16	8490981.705	4488780.035
17	N17	8490895.336	4488639.521
18	N18	8490794.664	4488475.812
19	N19	8490725.626	4488327.804
20	N20	8490638.548	4488141.113

21	N21	8490551.453	4487954.417
22	N22	8490476.207	4487793.104
23	N23	8490440.539	4487639.193
24	N24	8490397.754	4487455.664
25	N25	8490455.061	4487255.643
26	N26	8490563.590	4487156.496
27	N27	8490714.899	4487018.204

Ենթակայանի անկյունների կոորդինատները WGS համակարգում

Հ/h	Հենարանի համար	X կոորդինատ	Y կոորդինատ
1	Ձախ վերևի անկյուն	8490696.362	4486999.604
2	Ձախ ներքևի անկյուն	8490696.362	4486944.756
3	Աջ վերևի անկյուն	8490731.762	4486999.604
4	Աջ ներքևի անկյուն	8490731.762	4486944.553

Գործունեության ենթակա տարածքում բացակայում են մակերևութային ջրերը և քաղցրահամ ջրի աղբյուրները:

Գործունեության ենթակա և հարակից տարածքներում չկան բնության, պատմամշակութային հուշարձաններ: Գործունեության տարածքին ամենամոտ բնության հուշարձանը գտնվում է 1,2կմ հեռավորության վրա:

Գործունեության տարածքը գտնվում է «Սևան»ԱՊ-ից 4,6կմ հեռավորության վրա:

Ըստ հաշվետվությունում եղած տեղեկատվության գործունեության ենթակա տարածքում ՀՀ Կարմիր գրքերում ներառված բուսական և կենդանական տեսակները բացակայում են:

Շինարարության փուլում առաջանալու են թափոններ՝ շինաղբի, կենցաղային աղբի, մետաղական մնացորդների տեսքով 20մ^3 ծավալով, կենցաղային աղբ՝ 3120կգ/տարի քանակով:

Շահագործման փուլում՝ տրանսֆորմատորային ենթակայանի շահագործման ընթացքում հնարավոր վթարների կամ ենթակայանի վերանորոգման ժամանակ կառաջանան վտանգավոր թափոններ:

Հալոգեններ, դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղեր 15տ/տարի քանակով: Թափոնի առաջացման հնարավոր քանակը պայմանավորված է տրանսֆորմատորի յուղընդունիչի տարողությամբ:

Յուղոտված լաթեր 2կգ/տարի քանակով:

Ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդներ 2,5մ^3 քանակով:

Յուղերով աղտոտված ավազ 12մ^3 քնակով: Քիչ քանակությամբ մալուխների, հաղորդալարերի մնացորդների թափոններ՝ սև մետաղի ալյումինե և պղնձե, համապատասխանաբար՝ 20կգ, 50կգ և 30կգ քանակներով:

Շրջակա միջավայրի վրա նշված թափոնների հնարավոր ազդեցությունը կանխարգելելու նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

ՕԳ-ի և ենթակայանի կառուցման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների հեռացում, տարածքի հնարավորինս նախկին տեսքի բերում, օգտագործված, գոյություն ունեցող գրունտային ճանապարհի կարգաբերում: Կատարվելու է փոսերի, հենասյուների եզրային մասերի լիցք՝ հողային զանգվածով, իսկ վերին մասը ծածկվելու է բուսահողով:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

-Գործունեության իրականացման ընթացքում ծառահատումներ չեն կատարվելու, ենթակառուցվածքների փոփոխություններ չի առաջանալու:

-Ենթակայանի կառուցման շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում կկատարվի գրունտի խոնավեցում, անհրաժեշտության դեպքում՝ ճանապարհների ջրցան:

-Գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կատարել փակ ծածկ ունեցող մեքենաներով:

-Տարածքում նյութերը պահել ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ:

-Շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում, իրականացնել պարբերաբար ստուգումներ,

-Ենթակայանի կառուցման շինհրապարակում կտեղադրվի 3 տոննա տարողության պլաստմասե տարա՝ անձրևաջրերի հեռացման և հավաքման համար:

-Շինարարության ընթացքում առաջացած կենցաղային և արտադրական հոսքաջրերի հեռացման համար տեղադրել բիոզուգարան:

- Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում դադարեցնել շինարարական աշխատանքները և տեղեկացնել «Սևան»ԱՊ-ին:

- Թռչնի բների մեջ ձվերի կամ ձագերի հայտնաբերման դեպքում, պետք է դադարեցվեն աշխատանքները մինչ նրանց չվելը:

- շինարարական նյութերի մնացորդները(մետաղական մասեր) հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո կտեղափոխվեն Կապալառու կազմակերպության կողմից, անհրաժեշտության դեպքում կհանձնվեն համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին՝ դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար,

- կենցաղային աղբը հավաքել տարածքում տեղադրված պոլիէթիլենային պարկերի մեջ և տեղափոխել աղբավայր՝ համայնքապետարանի համաձայնությամբ:

-շինարարության ժամանակ առաջացած աղտոտված լաթերը, պարկերը հանձնվելու են թափոնների ջերմային վնասազերծում կատարող կազմակերպություններին կամ կենցաղային աղբի հետ 1/10 հարաբերակցությամբ խառնվելու են և տեղափոխվելու են աղբավայր:

-Շահագործման փուլում հնարավոր վթարներից կամ վերանորոգման արդյունքում հողային ռեսուրսների մեջ տրանսֆորմատորային յուղի արտահոսքերը կանխելու նպատակով նախատեսվում է հնարավոր վթարների դեպքում յուղընդունիչում հավաքված յուղը,

յուղոտված լաթերը և յուղային նյութեր պարունակող այլ մասերը հեռացնել և հանձնել համապատասխան վերամշակող կազմակերպություններին:
-Հալոգեններ, դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղերը հավաքվելու են համապատասխան տարրաների մեջ և հանձնվելու են մասնագիտացված վերամշակող կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,
-Նախատեսվում է հեղուկ նյութերը շինհրապարակում պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
-Ենթակայանն ապահովված է լինելու ավտոմատ կառավարման համակարգով, հրդեհաշիջման միջոցներով՝ հակահրդեհային կրակմարիչներով, ծխի և ջերմաստիճանի տվիչներով, ազդանշանային համակարգերով, անվտանգության նշաններով:
Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.
-պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցները, տրանսպորտային միջոցների շարժիչները:
Ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.
-Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ՝ ամիսը մեկ հաճախականությամբ:
-Գործունեության տարածքում շինարարական աշխատանքների կատարման ժամանակ պարբերաբար կատարել մոնիթորինգ, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլիացիաների հայտնաբերման և դրանց պահպանության նպատակով
-Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ շաբաթը մեկ անգամ հաճախականությամբ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, Գեղարքունիքի մարզի Լճաշեն, Վարսեր, Գեղամավան համայնքների տարածքներում 110/10կՎ լարման 2Х16ՄՎԱ հզորության ենթակայանի և 110կՎ լարման սնող օդային գծի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ Գեղարքունիքի մարզի ք. Սևան, Սևանեցի 4 Ա հասցեում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Գեղարքունիքի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

-Շինաշխատանքները կատարել պահպանելով շինարարության ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոնները համաձայն նորմերի:
-Էլեկտրահաղորդման գծերի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված անվտանգության գոտու պահպանում:
-Օդային ու մալուխային գծերի, ենթակայանի, պարբերական զննումների կազմակերպում ու անցկացում՝ այլ անձանց կյանքի ու գույքի անվտանգությունն ապահովելու նպատակով:
-Աղետներին հակազդելու համակարգերի աշխատունակության պարբերաբար զննում:
-Գյուղացիներին պատկանող հողատարածքներում գյուղատնտեսական աշխատանքների կատարման չխոչընդոտում՝ ՕԳ-ի ուղեգծի անվտանգության հարակից հատվածներում:
-Կանոնավոր կատարել սոցիալական պարտավորությունները՝ համաձայն համայնքի հետ կնքած պայմանագրի: Կանոնավոր հանդիպել համայնքի ղեկավարության հետ փոխադարձ հետաքրքրության խնդիրները քննարկելու համար:
- Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել գնահատման հաշվետվությունում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:
- Աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Գրին Սոլուշնս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Լճաշեն, Վարսեր, Գեղամավան համայնքների տարածքներում 110/10կՎ լարման 2Х16ՄՎԱ հզորության ենթակայանի և 110կՎ լարման սնող օդային գծի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Գոհար Մինասյան